

**"The ways to overcome the social-economic
and public-political issues in Armenia"**

Paper presented to the
Second Annual PFA Forum on Armenia-Diaspora Relations
February 28 – March 2, 2010
Washington D.C.

Artsvik Minasyan
Minister of Parliament
Republic of Armenia National Assembly
ARF Faction

The bases of Armenia's third republic were established around twenty years ago on the wave of national fight for freedom. The establishment of independent Republic of Armenia, the heroic victory of Artsakh includes themselves the wishes and goals raised from the desires of Armenian nation. The guarantee of realization of national goals first of all is the rehabilitated independent and social, legal, democratic state. However, these should not be just announcements and constitutional norms but reality where each Armenian and each citizen should feel them in their everyday life in any part of the world.

Unfortunately, in the previous period these desires did not only fail come to life but a non-confidence and disappointment, disregard towards the independent state and deprivation of trust to make the Armenian desires coming from years to become reality were formulated and continuing to go deeper. Yes, in previous years we did not succeed to establish sufficient grounds for realization of national goals, we did not succeed to explore the complete potential of Armenians all of the world and direct it to the enhancement of independent state and to the establishment of mother land appropriate for 21st century. Moreover, a new diaspora has been established aside the traditional diaspora with its new qualities and mentality. In a created situation the question what to do and how is raised again. It is obvious that in order to make them formulas it is necessary to analyze the existing issues really deeper, to identify their reasons, disclose the mistakes and gaps, formulate the tasks and put new powerful efforts for establishment of prosper, educated, responsible society with national features by using the whole national potential. In my opinion, this tool can guarantee the enhancement of Armenian state and the realization of goals of all parts of the Armenian nation in Armenia, Artsakh, Javakhk and diaspora.

To this point, by classifying the issues in three directions – national, social-economic and public-political, I don't have intention to introduce them by this one speech. I would like to mention that national issues while having pan Armenian extend and importance formulate the unified agenda of Armenia and Armenians. The maintenance of our identity, the enhancement of independent state and the future of generations are conditioned by the essence of solution of those issues and in the current revoluble historical phase the issue of Artsakh, the Armenian-Turkish relations, the issue of Javakhk and diaspora as well as the demands towards foreign policy of Armenia which is ensuring their solutions get special importance. However, the social justice and freedom are the basis of inter-national solidarity and unity required for solution of national issues that formulate the institutional basis necessary for establishment of social state by taking as a base the fundamental principles of democratic and legal state, by ensuring the freedom for creation of prosperity and justice for its allocation. From the other hand it should be realized in parallel with solution of the issues of public-political sphere including the issues of political democracy.

From this point of view I consider it necessary to introduce to your discussion the main provisions of the policy directed to the solution of the social-economic and public-political issues.

Competitive economic policy order

It is an economic truth that the market freedom can be used for the purpose of exclusion of that freedom, establishment of economic power by different groups and centralization of that authority if the political authority does not ensure necessary conditions for the appropriate functioning of market mechanism. It is obvious that the authority in the market that is introduced by itself can become political authority. Unfortunately the market alterations in Armenia took place with such scenarios. As a result, an economic order was formulated in Armenia when the economic groups having authority regulate the economy.

Of course, the issues of economic power is existing always but when the economy is regulated by the economic groups having authority the authority becomes equal to ownership. In the conditions of such order the individual in fact is deprived from the civil rights and does not have any impact and the private economic groups having authority keep them in economic dependence. Taking into account that this order principally deprives the individual from the freedom to make economic choice and to take responsibility it leads to poverty eventually. The economy regulated by this way impacts on the application of constitutional norms of the country as well even if they are enough democratic. This order brings to factual dictatorship and is not compatible with legal state and democracy.

The experience of different countries shows that the economic power centralized in the hands of groups gives a possibility to paralyze the legal state and democracy even without violation of law. For example, the economic monopolies are able to make obstacles for legislative authority to formulate its will independently (to pass laws for them) or even to prohibit it that is against to the meaning of democratic constitution including the principles of sovereignty of nation and equality of all citizens.

The confirmation according to which the legal state and market economy guarantee the freedom is not right. The market economies where a centralization of economic power by different groups exists is exceptionally related to dictatorships as it is introduced by the authoritarian regime of Latin America.

The solution of the created situation is the implementation of policy directed to the establishment of competitive economy and adoption of competitive economic order. But it is possible only in a case when all competitors of the market relations are deprived from the possibility to change the rules of game in the market. From this point of view it is necessary that the state identifies the market type, means rules of game that leads the economy by using relevant legal frameworks. In the full competitive frameworks no one has authority to regulate the activity of other person from the economic point of view.

The competitive economic order and the democracy are one entity. The competitive economy is democratic itself as the consumers, means the population regulate the economic

process by price formation and daily interrelation. The competitive economic order assumes existence of such economy where the economic power is maximally divided between big amounts of participants. Thus, the policy directed to the establishment of competitive economic order in a way is a tool to deprive the economic groups from authority.

The freedom of the individual is measured by the way how the implementation of authority division in the state, in the economy, between the state and economy is done. If each partial market with full competition supports to the freedom of public system as an entity then any step towards the centralization of economic power leads to non-freedom, legal deprivation and management insufficiency of economy.

Competitive economic order can be established only by “independent state” means the state where the monopolies have no impact on the formulation of its will. If the monopolies do not participate in the process of state’s will formulation then it is able to implement real supervision of the activities of monopolies. But how the state can become the force that realizes the relevant economic order? It is possible through the implementation of relevant economic policy in the context of general policy. From this point the following two main principles of the economic policy can be separated:

1. The state policy should aim to de-unify the groups having economic power or limit their functions as any enhancement of groups having economic power strengthens the deprivation of state’s neo-feudalism prestige.
2. The political-economic activity of the state should be directed to the establishment of economic orders types and not to the regulation of economic process. The issue is not if the state is big or small. I speak not about the quantitative but qualitative issue. As much as it is unacceptable to neglect the formulation of economic order in a same way the state is not able to manage the economic process. If the state intends to maintain its independence and meanwhile to interfere to the daily economic life then in this case there is only one way – the way of growing usurpation. There is only one way to get out from this conflict – to refuse direct regulation and centralize the efforts on the establishment of competitive order.

Social order policy

The social issue is not an isolated problem. It becomes clear when it is discussed and interpreted togher with solutions of other important issues of public life. From this point the social issue should be considered in the context of general policy of orders as well.

By now it seems that there wasn’t lack of separate activities of social policy. In many cases they really promote the improvement of workers condition. However, such activities did not sufficiently solve and can not solve the social issues. In a way the social policy is absolutely different thing than currently is realized under it. Arise the salary, prevent the occupational disasters or establish charity funds – these are all, for sure, are important but not suffi cient. Such approach towards the issue should be moved to backward. But not for the reason that the social policy issues have become not essential by the previous meaning. Vise versa, taking into account

that the issues are very emerging they should become decisive factor for general thinking by the categories of economic order. Moreover, currently the certain types of social policy are able to put the person in a non-decent situation for existence. The workers and all others who are in dependant or miserable situation can demand more than simple sympathy, kind-hearted approach or social assistance from time to time. They have right to demand establishment of order as only the competitive order enables the decent life for them and their relatives.

The implementation of social justice depends not only from realization of main principles of competitive economy but also from all defining and regulating principles. Due to this reason the issue of fair distribution should be discussed in the context of interrelation with other issues. The difference between income levels exists in all economic systems. The difference of income levels in the framework of market economy is explained by different results of economic activity, by monopoly or other leading positions in different markets. The distribution of incomes in market economy becomes an issue of justice from the economic point of view only in such cases when the level of incomes is decided on the basis of limitation proportions but other leading positions in the market. The formulation of huge properties by such saying Armenian oligarchs is explained not just by the income received from their properties but more by the strength leading positions that they have in the markets.

The fact that social successes of certain groups were possible only due to their powerful position in the market can not be ignored. Thus, the achievement of social justice worth to be seeking on the way of establishment of generally functioning order and first of all on the ways of strict regulation income generation process according to the rules of competitiveness, risk and responsibility. It can be looked for in the abolition of private ownership.

From this point the relation of labour market with the issue of freedom becomes essential. In case of existence of monopoly in the labour market the employer can reduce the salary from the not correctly defined level but the employees receive just a part of social result which many times is less than it would be in case if it is formulated in the conditions of competitive order. By the way, the circulus vitiosus very often shows itself – as much as the real salary is reduced the material status of the employee becomes limited and he is forced to work more. The growth of labour force supply makes the condition of employee's worst in the case of salary reduction and strengthens the authority of monopolist buyers of labor force.

The powerful thing in the labour market is the conflict between the employers and employee. If currently the freedom and legal equality of people seems guaranteed from the political and legal points, the employees remain not-free from the economic and social point. Without ensuring necessary rights for freedom the solution of social issue is impossible. While the state should be limited by supervision functions and development of those possible forms that lead the economic process, the freedom should exist in the market frameworks, including labour force markets. The goal of social order should be like this.

The issue is not if the labour force market are necessary or not, but what is the right type of these markets. I am speaking about the formulation of decent market for the person. From this point it is necessary to take into account a range of approaches. The employee is not selling

himself as an individual, he is selling the work done by him. In order to prevent the exploitation it is necessary to appose to the tendency of authority centralization. There should be balance between the partners. The caring towards protection and balanced justice should not depend from the more or less kind will of certain individual.

Thus, currently the social issue is the issue of freedom in a way. Well functioning competitive order can enable the person to get rid of not only from economic need but protect him from violations towards its freedom.

Public, state and constitutional orders

Each public order has a pyramid type. Management level exists in all orders. There was never an unclassified society and can not exist. But this pyramid can be established both from bottom and top. Either the families and self-governing groups established in a non-regulated way are the carriers of society or these groups are established and managed from the top.

In our times when the authority in the economic sphere is being expanded it starts to have special role in the sphere of public order formulation as well. However, when at the same time the economic power is centralized in the hands of certain groups that start not only to decide the state will, to take from them the important spheres of their previous activity more and more, the existence of a big portion of people appears in the hands of that unstable organization (which is subject of impact from different interested persons and groups). Such situation of things becomes more serious when people start to accept the thesis according to which the state is not bind by any moral laws. When the activity spheres and resources of state are growing and at the same time the acceptance of the mentioned thesis becomes universal the state looses the right of spiritual management of the nation. The state which is persistently tries to get rid of moral responsibilities announces its activity sphere as a shelter of baseness and dishonesty and arises the anger of people against it.

State must expose to law. It must act and move forward itself in scopes of reason and law. That's why the state must recognize and protect spheres of freedom and rights of each citizen. This is the main idea of legal state. In addition legal state must protect its citizen's rights from two dangers: authorities who compel state administrative bodies and simultaneously other citizens. Are legal regimes of legal state compatible with economic regime coming from laissez-fair policy of unregulated economy or in what extent are they compatible? Legal state cannot completely be practiced, if monopolies and struggle between them destroy the projects of building it. There, where monopolies are exist, for example monopolies of buyers in labour force market, individual freedom is very limited in spite of existence of constitutional rights. Even the guarantee of main constitutional rights cannot help them. Employees are free only formally they are not free in fact. So laissez-fair policy don't assist to accomplishment of economic regime adequate to legal state, because in case of such kind of economic policy may arise non-supervised monopolies or partial monopolies. The issue can be solved only by changing the form of market.

The legal state can be realized completely only there, where together with its national-legal regime the adequate competition economic regime is practiced. It is not only about interconnection of legal state and monopolies. Besides there is an important issue what influence the monopolies have on state political structure in general and first of all on formation of state will. This influence goes too far. It becomes clear that the formation of monopolies just transforms the state. Private authorities are able to neutralize guaranteed freedom of other people and connected with it also the influence on other people regimes. There are many examples how having authority private structures gaining political weight (influence both on legislative body and on judicial practice, ministries and other governing bodies) can also change political life and political structure of the country. Dependence on pressure of groups having economic power this is the picture of present Armenian reality. The obvious examples are almost all pan-state elections. Moreover, it has its real expression in the elections of Yerevan Mayor that took place in May 2009. Despite it was first time foreseen by the law that local self-governing elections will be conducted by proportionate order, however nor the programmes introduced to the electorate and the views on Yerevan development of political forces participating in the elections, neither the real weights of political forces were given sufficient importance. As a result, one time it was re-approved: dependence from pressure of groups having economic power. This is the picture of current Armenian reality.

This fall of the state took place in the result of applying unregulated market model. Present governing groups' attitude to Armenian state in most cases is a real game for the authorities and the state as a power which is establishing order practically becomes bankrupt.

The system of concentrating power is not only dependent, but also maximum inefficient. Such kind of economic regime is inconstant and can overgrow into global group anarchy or dictatorship, which is typical for planned economy. In such kind of regime individual and group egoism has a tendency of quick growth, because individual persons and groups were provided with power. In struggle with other groups and state the groups present their profits or that what they understand under it, but not general profits. If individual or group profit in the process of forming position in the market will express inclination of forming monopoly it can come into contradiction with general profit. As much authority have individual persons, as more is the danger that will arise conflict between individual and general profits. From the point of view of economy it is arising mutual enmity /antagonism/ of double-sided monopolies, in which only not stable equilibrium condition is available, which has a tendency of instability. Subsequently such condition brings to the struggle between groups and global group anarchy.

Actual legislation essentially can be deflected from written legislation. General solutions which are reflected in the legislation have no success, and authority structures created according to the legislation, for example parliament, are falling back in favor of governing forces, which stay outside of the legislation and pursue their individual and group profit. Created right by the economy force is out the right established by the state in such way frustrating the state authority. It begins to create neo-feudal situation when economic groups which have authority begin to treat with state authority as with the kind of private property.

Economic, public and state regimes are interconnected. As economic policy needs acting state, definite policy of economic regime is also needed to make state acting. Interconnections of state and economic regimes makes at once build two regimes. It is important. The two regimes are only parts of general regime. Without competition regime cannot arise state which is ready to implement independent activities and without it the competition regime also is not possible.

So it is necessary to note that one of the most important issues of regime policy is coordination of individual and general interests. To help people for growing of potential and simultaneously to take care it not to be directed against general interests is the aim to which the competition regime policy is directed. Competition regime is the only type of regime which controls egoistic powers. In centralized managing economic regime is rapidly developing the egoism of authorities and bureaucracy, as well as willfulness. The same picture is in governing groups of unregulated economy. But competition regime also makes a real egoist to work for general profit and rationally serve for overcoming limitedness of consumer goods.

However, to leave the solution of the issue only on the citizens of Armenia can not be justified. So why it is important to direct the potential of all Armenians to overcome the problems while taking part in the policy implementation for establishment of orders. It is not a secret that the groups with economic power are strong particularly in the sphere of import. It is clear also that the import three times exceeds the export. I think that the foreign investment grow in the spheres having export orientation and from this point the change of export-import proportion in favor of export can infringe the current monopolistic balance and create background for implementation of efficient competitive policy. In my opinion our compatriots from diaspora can have decisive impact on this issue by directing their capital in the homeland to the spheres having export orientation. This also concerns to the policy of competition promotion in the spheres of local production. Other important impact can be the investment of the best Western experience and culture of entrepreneurship in the organizations of investments made in Armenia that assumes formulation of developed system of corporative management, qualitatively new relations between the employer and employees and modern standards of corporative social responsibility.

Յայաստանի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական հիմնախնդիրների հաղթահարման ուղիները

Շուրջ քսան տարի առաջ ազատության համար պայքարի համազգային ալիքի վրա ձևավորվեցին Յայաստանի երրորդ հանրապետության հիմքերը: Յայաստանի անկախ հանրապետության ստեղծումը, Արցախյան հերոսական հաղթանակը իրենց մեջ կրում են հայ ժողովրդի իղձերից բխող ցանկություններն ու նպատակները: Յամազգային նպատակների իրականացման երաշխավորը նախ և առաջ վերականգնված անկախ պետականությունն ու սոցիալական, իրավական, ժողովրդավարական պետությունն են: Սակայն սրանք լոկ հայտարարություններ և սահմանադրական նորմեր չպետք է լինեն, այլ իրականություն, որտեղ յուրաքանչյուր հայ և յուրաքանչյուր քաղաքացի՝ աշխարհի որ մասում էլ լինի պետք է զգա այն իր առօրյա կյանքում:

Ցավոք նախընթաց ժամանակահատվածում ոչ միայն այս ցանկություններն ամբողջությամբ կյանքի չկոչվեցին, այլև ձևավորվեց և շարունակում է խորանալ անվստահությունն ու հիասթափությունը, անկախ պետականության նկատմամբ անտարբերությունն ու հայոց դարավոր երազանքները իրականություն դարձնելու հավատի կորուստը: Այն նախորդ տարիներին մեզ չհաջողվեց ստեղծել համազգային նպատակների իրականացման համար բավարար հիմքեր, մեզ չհաջողվեց աշխարհասփյուռ հայության ամբողջական ներուժը բացահատել և ուղղորդել անկախ պետականության հզորացմանն ու համայն հայության բարեկեցիկ և 21-րդ դարին հարիր բնօրրանի ստեղծմանը: Ավելին, ավանդական սփյուռքի կողքին ձևավորվեց նոր սփյուռք՝ իր նոր որակներով, աշխարհընկալման իր նոր պատկերացումներով: Ստեղծված իրավիճակում նորից բարձրանում է հարցը ինչ անել և ինչպես: Ակնհայտ է, որ դրանք բանաձևելու համար կարիք կա իսկապես խորությամբ վերլուծել առաջացած հիմնախնդիրները, բացահատել դրանց պատճառները, վեր հանել սխալներն ու թերությունները, ձևակերպել անելիքները և համազգային ներուժի ամբողջական գործադրմամբ նոր թափով լծվել բարեկեցիկ, ազգային դիմագիծ ունեցող, կրթված պատասխանատու հասարակության ձևավորման գործին: Սա, իմ կարծիքով, այն միջոցն է, որը կարող է երաշխավորել հայոց պետականության ամրապնդումը, հայ ժողովրդի բոլոր հատվածների նպատակների իրականացումը՝ Յայաստանում, Արցախում, Ջավախքում և սփյուռքում:

Առ այդ, հիմնախնդիրները դասակարգելով 3 ուղղությամբ՝ ազգային, սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական չեմ հավակնում դրանք այս մի գեկուցմամբ ներկայացնել: Նշեմ, որ ազգային հիմնախնդիրները, ունենալով համահայկական տարողություն և նշանակություն, ձևավորում են Յայաստանի և հայության միասնական օրակարգը: Այդ հիմնախնդիրների լուծման բնույթով է պայմանավորված մեր

ինքնության պահպանումը, անկախ պետականության ամրապնդումը և սերունդների ապագան Հայության համար պատասխանատու և շրջադարձային ներկա պատմական փուլում առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում Արցախյան հիմնախնդիրը, հայթորքական հարաբերությունները, Ջավախքի հարցը և սփյուռքը, ինչպես նաև դրանց լուծումն ապահովող Հայաստանի արտաքին քաղաքականությանը ներկայացվող պահանջները: Սակայն ազգային հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ներազգային համերաշխության և միասնության հիմքը սոցիալական արդարությունն ու ազատությունն են, որոնք հիմնվելով ժողովրդավարական և իրավական պետության հիմնարար սկզբունքների վրա, ապահովելով բարիքների ստեղծման ազատությունն ու դրանց բախշման արդարությունը ձևավորում են սոցիալական պետության կառուցման համար անհրաժեշտ ինստիտուցոնալ հիմքը: Մյուս կողմից այն պետք է իրագործվի հասարակական- քաղաքական ոլորտի հիմնախնդիրների, ներառյալ քաղաքական ժողովրդավարության հիմնահարցերի լուծմանը զուգընթաց:

Այս հայեցակետից մեկնելով անհրաժեշտ եմ համարում Ձեր քննարկմանը ներկայացնել սոցիալ- տնտեսական և հասարակական- քաղաքական հիմնախնդիրների լուծման միտված կարգերի քաղաքականության հիմնադրույթները:

Մրցակցային տնտեսական կարգի քաղաքականությունը

Տնտեսագիտական ճշմարտություն է, որ շուկայի ազատությունը կարող է օգտագործվել այդ ազատությունը բացառելու, տարբեր խմբավորումների կողմից տնտեսական իշխանություն ձևավորելու և այդ իշխանության կենտրոնացման նպատակներով, եթե քաղաքական իշխանությունը շուկայական մեխանիզմի անխափան աշխատանքի համար չապահովի համապատասխան պայմաններ: Հայտնի է նաև, որ իշխանությունը շուկայում, որը ներկայացվում է ինքն իրեն, կարող է դառնալ քաղաքական իշխանություն: Դժբախտաբար, հենց նման սցենարով ընթացան շուկայական վերափոխումները Հայաստանում: Արդյունքում, Հայաստանում ձևավորվեց այնպիսի մի տնտեսական կարգ, երբ տնտեսությունը կարգավորվում է իշխանություն ունեցող տնտեսական խմբավորումների միջոցով:

Իհարկե, տնտեսական իշխանության խնդիրը գոյություն է ունեցել միշտ, սակայն, երբ տնտեսությունը կարգավորվում է իշխանություն ունեցող տնտեսական խմբավորումների միջոցով, իշխանությունը հավասարազոր է դառնում սեփականությանը: Այդպիսի կարգի պայմաններում անհատը փաստացի զրկված է քաղաքացիական իրավունքներից և չունի որևէ ազդեցություն, իսկ իշխանությամբ օժտված մասնավոր տնտեսական խմբերը նրան պահում են տնտեսական կախվածության մեջ: Քանի որ այս կարգը սկզբունքորեն անհատին զրկում է տնտեսական ընտրություն կատարելու ազատությունից և իր վրա պատասխանատվության բեռ վերցնելուց, այն վաղ թե ուշ ծնում է աղքատություն: Այս եղանակով կարգավորվող տնտեսությունը ազդում է նաև երկրի սահմանադրական նորմերի կիրառման վրա, թեկուզև դրանք լինեն

բավականաչափ ժողովրդավարական: Այս կարգը ծնում է փաստացի դիկտատուրա և անհամատեղելի է իրավական պետության և ժողովրդավարության հետ:

Տարբեր երկրների փորձը ցույց է տվել, որ խմբերի ձեռքում կենտրոնացված տնտեսական իշխանությունը հնարավորություն է տալիս, նույնիսկ չխախտելով օրենքը, կաթվածահար անել իրավական պետությունը և ժողովրդավարությունը: Օրինակ, տնտեսական մենաշնորհներն ի վիճակի են խոչընդոտել օրենսդիր իշխանության կողմից իր կամքի ազատ ձևավորմանը (անցկացնել իրենց հարմար օրենքներ) կամ նույնիսկ արգելափակել այն, որը հակասում է ժողովրդավարական սահմանադրության իմաստին, այդ թվում՝ ժողովրդի ինքնիշխանության և բոլոր քաղաքացիների հավասարության սկզբունքներին:

Ճիշտ չէ տարածված այն հաստատումը, համաձայն որի իրավական պետությունը և շուկայական տնտեսությունը երաշխավորում են ազատությունը: Շուկայական տնտեսությունները, որոնցում առկա է տնտեսական իշխանության կենտրոնացում առանձին խմբերի կողմից, հարկ է կապել բացառապես դիկտատուրաների հետ, ինչպես դա ցուցադրում են Լատինական Ամերիկայի ավտորիտար ռեժիմները:

Ստեղծված իրավիճակից ելքը մրցակցային տնտեսության ստեղծմանն ուղղված քաղաքականության իրականացումն է, և մրցակցային տնտեսական կարգի հաստատումը: Բայց այն հնարավոր է միայն այն դեպքում, երբ շուկայական հարաբերությունների բոլոր մասնակիցները զրկված են շուկայում խաղի կանոնները փոխելու հնարավորությունից: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ պետությունը, օգտագործելով համապատասխան իրավական շրջանակները, նախանշի շուկայի ձևը, այսինքն խաղի կանոնները, որոնցով վարվում է տնտեսությունը: Լիակատար մրցակցության շրջանակներում ոչ ոք չունի տնտեսական առումով այլ անձի գործունեությունը կարգավորելու իշխանություն:

Մրցակցային տնտեսական կարգը և ժողովրդավարությունը մեկ ամբողջություն են կազմում: Մրցակցային տնտեսությունը ինքնին ժողովրդավարական է, քանի որ դրանում սպառողները, այսինքն ժողովուրդը, գնագոյացման միջոցով և ամենօրյա փոխկապածության հիման վրա կարգավորում են տնտեսական պրոցեսը: Մրցակցային տնտեսական կարգը ենթադրում է այնպիսի տնտեսության գոյություն, որում տնտեսական իշխանությունը առավելագույնս բաժանված է մեծ թվով մասնակիցների միջև: Այսպիսով, մրցակցային տնտեսական կարգի հաստատմանն ուղղված քաղաքականությունն ըստ էության իշխանությամբ օժտված տնտեսական խմբերին իշխանությունից զրկելու գործիք է:

Այն չափով, ինչքանով իրականացվում է իշխանությունների բաժանում պետության մեջ, տնտեսության ներսում, պետության և տնտեսության միջև, այդ չափով էլ հիմնավորվում է անհատի ազատությունը: Եթե ցանկացած լիակատար մրցակցությամբ մասնակի շուկա աջակցում է ամբողջությամբ վերցրած հասարակական համակարգի ազատությանը, ապա տնտեսական իշխանության կենտրոնացման ցանկացած քայլ

տանում է անազատության, իրավազրկության և տնտեսության կառավարման անարդյունավետության:

Մրցակցային տնտեսական կարգ կարող է հաստատել միայն “անկախ պետությունը”, այսինքն այն պետությունը, որի կամքի ձևավորման վրա մոնոպոլիաները ազդեցություն չունեն: Եթե մոնոպոլիաները չեն մասնակցում պետության կամքի ձևավորման գործընթացին, ապա նա ընդունակ է իրականացնել մոնոպոլիաների գործունեության իրական վերահսկում: Բայց ինչպես պետությունը կարող է դառնալ այն ուժը, որը իրացնում է համապատասխան տնտեսական կարգը: Դա հնարավոր է կարգերի ընդհանուր քաղաքականության համատեքստում համարժեք տնտեսական քաղաքականություն իրականացնելու ճանապարհով: Այս առումով կարելի է առանձնացնել տնտեսական քաղաքականության հետևյալ երկու հիմնական սկզբունքները.

1. Պետության քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի նրան, որպեսզի կազմացրի տնտեսական իշխանությամբ օժտված խմբավորումները կամ սահմանափակի դրանց ֆունկցիաները, քանի որ տնտեսական իշխանություն ունեցող խմբավորումների ցանկացած ամրապնդում ուժեղացնում է պետության նեոֆեոդալական հեղինակության անկումը:

2. Պետության քաղաքական- տնտեսական գործունեությունը պետք է ուղղված լինի տնտեսական կարգի ձևերի ստեղծմանը, այլ ոչ թե տնտեսական պրոցեսի կարգավորմանը: Հիմնախնդիրը մեծ կամ փոքր պետության մեջ չէ: Խոսքը գնում է ոչ թե քանակական, այլ որակական հիմնախնդրի մասին: Որքան անհանդուրժելի է ինքնահոսի թողնել տնտեսական կարգի ձևավորումը, այնքան էլ ինքը պետությունը անկարող է դեկավարել տնտեսական պրոցեսը: Եթե պետությունը մտադիր է պահպանել իր անկախությունը և այնուամենայնիվ միջամտել ամենօրյա տնտեսական կյանքին, ապա այս դեպքում մնում է մի ճանապարհ` բռնապետության վերածելու ճանապարհը: Գոյություն ունի այս կոնֆլիկտից դուրս գալու ընդամենը մեկ ելք` հրաժարում ուղղակի կարգավորումից և ջանքերի կենտրոնացում մրցակցային կարգի ստեղծման վրա:

Սոցիալական կարգի քաղաքականություն

Սոցիալական հարցը մեկուսացված հիմնախնդիր չէ: Այն դառնում է հասկանալի, երբ քննարկվում և մեկնաբանվում է հասարակական կյանքի մյուս կարևոր հարցերի լուծման հետ միասին: Այս առումով սոցիալական հարցը նույնպես պետք է դիտել կարգերի ընդհանուր քաղաքականության համատեքստում:

Մինչև այժմ սոցիալական քաղաքականության առանձին վերցրած միջոցառումների հարցում կարծես թե պակասություն չի եղել: Դրանք շատ դեպքերում իսկապես նպաստել են աշխատավորների վիճակի բարելավմանը: Սակայն այդպիսի միջոցառումները բավարար աստիճանով չեն լուծել և չեն կարող լուծել սոցիալական հարցերը: Ըստ էության սոցիալական քաղաքականությունը իրենից ներկայացնում է

բացարձակապես այլ բան, քան ներկայումս դրա տակ հասկացվում է: Բարձրացնել աշխատավարձը, կանխել դժբախտ պատահարները արտադրությունում կամ ստեղծել բարեգործական ֆոնդեր, դրանք բոլորը, անկասկած, կարևոր են, սակայն բավարար չեն: Հիմնախնդրի նկատմամբ այդպիսի մոտեցումը պետք է մղվի հետին պլան: Բայց ոչ թե նրա համար, որ սոցիալական քաղաքականության խնդիրները նախկին իմաստով դարձել են ոչ էական: Ընդհակառակը, քանի որ խնդիրները շատ արդիական են, դրանք մյուս խնդիրների հետ միասին պետք է դառնան տնտեսական կարգի կատեգորիաներով ընդհանուր մտածողության որոշիչ գործոն: Ավելին, ներկայումս սոցիալական քաղաքականության որոշակի ձևերը ի վիճակի են մարդուն դնել նրա գոյության համար ոչ արժանապատիվ վիճակի մեջ: Աշխատողները և բոլոր նրանք, որոնք գտնվում են կախվածության կամ թշվառ վիճակում, կարող են պահանջել ավելին, քան պարզապես կարեկցանքը, գթասրտությունը կամ սոցիալական օգնությունը դեպքից դեպք: Նրանք իրավունք ունեն պահանջել կարգի հաստատում, քանի որ միայն մրցակցային կարգն է հնարավոր դարձնում արժանապատիվ կյանքը իրենց և իրենց հարազատների համար:

Սոցիալական արդարության իրականացումը կախված է ոչ միայն մրցակցային տնտեսության հիմնական սկզբունքի իրացումից, այլև բոլոր սահմանող և կարգավորող սկզբունքներից: Այդ պատճառով արդար բաշխման հիմնանդիրը հարկ է քննարկել այլ հարցերից փոխկախվածության և պայմանավորվածության համատեքստում: Եկամուտների մակարդակների միջև տարբերությունը գոյություն ունի բոլոր տնտեսական համակարգերում: Շուկայական տնտեսության շրջանակներում եկամուտների մակարդակում տարբերությունը բացատրվում է տնտեսական գործունեության տարբեր արդյունքներով, առանձին շուկաներում մենաշնորհային կամ այլ իշխող դիրքերով: Շուկայական տնտեսությունում եկամուտների բաշխումը դառնում է արդարության հիմնախնդիր տնտեսական իմաստով միայն այն դեպքում, երբ եկամուտների մակարդակը որոշվում է ելնելով ոչ թե սահմանափակության համամասնություններից, այլ շուկայում զբաղեցրած իշխող դիրքերից: Այսպես կոչված հայ օլիգարխների խոշոր ունեցվածքների ստեղծումը բացատրվում է ոչ այնքան նրանց կողմից տիրապետվող գույքից ստացված եկամուտներով, որքան այն ամուր իշխող դիրքերով, որը նրանք ունեն շուկաներում: Չի կարելի նաև ուշադրությունից դուրս թողնել այն փաստը, որ որոշ խմբերի սոցիալական հաջողությունները հնարավոր են դարձել միայն շնորհիվ շուկայում ունեցած ուժեղ դիրքի: Հետևաբար, սոցիալական արդարության ձեռքբերումը հարկ է որոնել ընդհանուր գործող կարգի ստեղծման ճանապարհին, նախ և առաջ եկամուտների ձևավորման պրոցեսը մրցակցության, ռիսկի և պատասխանատվության խիստ կանոններին ենթարկելու ճանապարհներին: Չի կարելի այն որոնել մասնավոր սեփականության վերացման մեջ:

Այս առումով էական է դառնում աշխատուժի շուկայի առնչությունը ազատության խնդրի հետ: Աշխատուժի շուկայում մենաշնորհի առկայության պայմաններում աշխատավարձը կարող է գործատուի կողմից իջեցվել առանց ճիշտ նախանշված

սահմանից, իսկ աշխատողները ստանում են միայն սոցիալական արդյունքի այն մասը, որը շատ անգամ փոքր է, քան դա կլիներ, եթե այն ձևավորվեր մրցակցային կարգի պայմաններում: Ընդ որում հաճախ իր մասին զգացնել է տալիս արատավոր շրջանը (circulus vitiosus)՝ որքան նվազում է իրական աշխատավարձը, այնքան սահմանափակ է դառնում աշխատողի նյութական վիճակը և նա ստիպված է լինում աշխատել ավելի շատ: Աշխատուժի առաջարկի աճը աշխատավարձի իջեցման պայմաններում էլ ավելի է վատթարացնում աշխատավորների վիճակը և ամրապնդում աշխատուժի մոնոպոլիստ գնորդների իշխանությունը:

Աշխատուժի շուկայում գերիշխողը գործատուների և վարձու աշխատողների միջև հակասությունն է: Եթե մարդկանց ազատությունը և իրավահավասարությունը ներկա կարգի պայմաններում թվում են երաշխավորված քաղաքական և իրավական առումներով, ապա աշխատավորները մնում են անազատ տնտեսական և սոցիալական տեսանկյունից: Առանց ազատության համար անհրաժեշտ իրավունքների ապահովման, սոցիալական հարցի լուծումն անհնար է: Այն ժամանակ, երբ պետությունը պետք է սահմանափակվի վերահսկման ֆունկցիաներով և այն հնարավոր ձևերի մշակմամբ, որոնցում ընթանում է տնտեսական պրոցեսը, շուկաների շրջանակներում, այդ թվում աշխատուժի շուկաներում, պետք է գոյություն ունենա ազատություն: Այդպիսին պետք է լինի սոցիալական կարգի նպատակը:

Հարցը նրանում չէ, անհրաժեշտ են արդյոք աշխատուժի շուկաներ թե ոչ, այլ՝ ինչպիսին է այդ շուկաների ճիշտ ձևը: Խոսքը մարդու համար արժանապատիվ շուկայի ձևավորման մասին է: Այդ իմաստով անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք մոտեցումներ: Աշխատողը չի վաճառում իրեն որպես անհատ, նա վաճառում է իր կողմից կատարված աշխատանքը: Շահագործման կանխարգելման համար անհրաժեշտ է հակազդել իշխանության կենտրոնացման միտումին: Գործընկերների միջև պետք է հավասարակշռություն գոյություն ունենա: Ապահովվածության և հավասարակշռված արդարության նկատմամբ հոգատարության առաջացումը չպետք է կախված լինի առանձին վերցրած անհատի շատ կամ քիչ բարի կամքից: Այն կարգերի քաղաքականության գործոն է:

Այսպիսով, ներկայումս սոցիալական հարցը ըստ էության մարդու ազատության հարցն է: Լավ գործող մրցակցային կարգը կարող է մարդուն ազատել ոչ միայն տնտեսական կարիքից, այլև պաշտպանել նրան իր ազատության նկատմամբ ոտնձգություններից:

Հասարակական, պետական և սահմանադրական կարգը

Ցանկացած հասարակական կարգ ունի բուրգի ձև: Ղեկավարող շերտ գոյություն ունի բոլոր կարգերում: Անդասակարգ հասարակություն երբեք գոյություն չի ունեցել և չի կարող գոյություն ունենալ: Սակայն այդ բուրգը կարող է կառուցվել ինչպես ներքևից, այնպես էլ վերևից: Կամ ընտանիքները և տարրերայնորեն առաջացած

ինքնակառավարվող կազմավորումներն են հանդիսանում հասարակության կրողները կամ այդ կազմավորումները ստեղծվում և կառավարվում են վերևից:

Մեր ժամանակներում, երբ ընդլայնվում է պետության իշխանությունը տնտեսական ոլորտում, այն սկսում է հատուկ դեր խաղալ նաև հասարակական կարգի ձևավորման ասպարեզում: Սակայն, երբ միաժամանակ տնտեսական իշխանությունը կենտրոնանում է որոշակի խմբերի ձեռքում, որոնք սկսում են ոչ միայն ավելի շատ որոշել պետության կամքը, վերցնել նրանից նախկին գործունեության կարևոր ոլորտները, մարդկանց մեծ մասի գոյությունը հայտնվում է այդ անկայուն կազմավորման (այն ենթակա է տարբեր շահագրգիռ անձանց և խմբերի ազդեցությանը) ձեռքում: Իրերի այդպիսի վիճակը դառնում է էլ ավելի լուրջ, երբ մարդիկ սկսում են ընդունել այն թեզը, որի համաձայն պետությունը կապված չէ ոչ մի բարոյական օրենքներով: Երբ օբյեկտիվորեն աճում են պետության գործունեության ոլորտները և միջոցները, և միաժամանակ նշված թեզի ընդունումը դառնում է համընդհանուր, պետությունը կորցնում է ժողովրդի հոգևոր ղեկավարման իրավունքը: Պետությունը, որը համառորեն ձգտում է ազատվել բարոյական պարտավորություններից, իր գործունեության ոլորտը հայտարարում է ստորության և անազնվության ապաստարան և իր դեմ է հանում մարդկանց չարությունը:

Պետությունը պետք է ենթարկվի իրավունքին: Այն ինքը պետք է գործի և առաջ շարժվի բանականության և իրավունքի շրջանակներում: Այդ պատճառով պետությունը պարտավոր է ճանաչի և պաշտպանի ազատության ոլորտները և յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը: Դրանում է կայանում իրավական պետության հիմնական գաղափարը: Ընդ որում իրավական պետությունը պարտավոր է պաշտպանել իր քաղաքացիների իրավունքները երկու վտանգներից՝ պետական վարչական մարմինների հարկադրող իշխանությունից, և միաժամանակ այլ քաղաքացիներից: Համատեղելի են արդյոք իրավական պետության իրավական կարգերը չկարգավորվող տնտեսության (*laissez-faire*) քաղաքականությունից բխող տնտեսական կարգերի հետ: Կամ ինչ աստիճանով են դրանք համատեղելի: Իրավական պետությունը չի կարող ամբողջությամբ կենսագործվել, եթե մոնոպոլիաները և նրանց միջև պայքարը ջնջելու են դրա կառուցման պլանները: Այնտեղ, որտեղ գոյություն ունեն մոնոպոլիաներ, օրինակ գնորդների մոնոպոլիաներ աշխատուժի շուկայում, անհատական ազատությունը, չնայած բոլոր հիմնական սահմանադրական իրավունքների առկայությանը, շատ սահմանափակ է: Նույնիսկ հիմնական սահմանադրական իրավունքների երաշխիքը չի կարող օգնել նրանց: Աշխատողները ազատ են միայն ձևականորեն, իրականում նրանք ազատություն չունեն: Այսպիսով, *laissez-faire* քաղաքականությունը չի նպաստում իրավական պետությանը համարժեք տնտեսական կարգի կայացմանը, քանի որ այդպիսի տնտեսական քաղաքականության ժամանակ կարող են առաջանալ չվերահսկվող մոնոպոլիաներ կամ մասնակի մոնոպոլիաներ: Հարցը կարող է լուծվել միայն շուկայի ձևի փոփոխության ճանապարհով:

Իրավական պետությունը կարող է ամբողջ ծավալով իրացվել միայն այնտեղ, որտեղ նրա պետական-իրավական կարգի հետ միասին կենսագործվել է նաև համարժեք մրցակցային տնտեսական կարգ: Խոսքը միայն իրավական պետության և մոնոպոլիաների փոխկապվածության մասին չէ: Բացի դրանից, գոյություն ունի մեծ հիմնախնդիր, ինչպես են մոնոպոլիաները ազդում պետության քաղաքական կառուցվածքի վրա ընդհանրապես, և առաջին հերթին, պետության կամքի ձևավորման վրա: Այդ ազդեցությունը տարածվում է բավականին հեռու: Պարզվում է, որ մոնոպոլիաների կազմավորումը ուղղակի տրանսֆորմացնում է պետությունը: Մասնավոր իշխանության կրողները ի վիճակի են չեզոքացնել այլ մարդկանց երաշխավորված ազատությունները: Դրա հետ կապված է նաև մարդկային այլ կարգերի վրա ազդեցությունը: Բազմաթիվ օրինակներ կան, թե ինչպես են իշխանություն ունեցող մասնավոր կառուցվածքները ձեռք բերելով քաղաքական կշիռ (ազդեցություն ինչպես օրենսդիր մարմնի, այնպես էլ դատական պրակտիկայի, նախարարությունների և կառավարման այլ մարմինների վրա) փոխել նաև երկրի քաղաքական կյանքը և պետական կառուցվածքը: Դրա ցայտուն արտահայտություններից են Հայաստանում անցկացված գրեթե բոլոր համապետական ընտրությունները: Ավելին, այն իր իրական արտահատությունն ունեցավ նաև 2009 թվականի մայիսին անկացված Երևանի քաղաքապետական ընտրություններում: Թեև օրենքով առաջին անգամ նախատեսվեց, որ տեղական ինքնակառավարման ընտրություններն անցկացվելու էին համամասնական ընտրակարգով, սակայն ամենևին չկարևորվեց ոչ միայն ընտրողներին ներկայացվող ծրագրերը, Երևանի զարգացման վերաբերյալ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի տեսակետները, այլ նաև քաղաքական ուժերի իրական կշիռները: Արդյունքում, ևս մեկ անգամ վերահաստատվեց. կախվածություն տնտեսական իշխանություն ունեցող խմբերի ճնշումից, ահա այն պատկերը, որը իրենից ներկայացնում է ներկայիս հայկական իրականությունը: Պետության այդ անկումը տեղի է ունեցել հենց չկարգավորվող շուկայի մոդելի կիրարկման արդյունքում: Այսօր իշխող խմբավորումների վերաբերմունքը հայկական պետության նկատմամբ շատ դեպքերում իրենից ներկայացնում է իսկական խաղ իշխանության համար, իսկ պետությունը որպես ուժ, որը հաստատում է կարգ, փաստորեն սևանկ է դուրս գալիս:

Մասնավոր տնտեսական խմբերի կողմից իշխանության կենտրոնացման համակարգը ոչ միայն անազատ է, այլև առավելագույնս անարդյունավետ: Այդպիսի տնտեսական կարգը անկայուն է և կարող է վերաճել համընդհանուր խմբային անարխիայի կամ դիկտատուրայի, որը բնորոշ է պլանային տնտեսությանը: Այդպիսի կարգի ժամանակ անհատական և խմբային Էգոիզմը բուռն աճի միտում ունի, քանի որ առանձին անձիք և խմբերը օժտված են իշխանությամբ: Մյուս խմբերի և պետության հետ պայքարում խմբերը ներկայացնում են իրենց շահերը կամ այն, ինչ նրանք հասկանում են դրա տակ, բայց ոչ ընդհանուրի շահերը: Երբ անհատական կամ խմբային շահը շուկայում դիրքի ձևավորման ժամանակ դրսևորվի մոնոպոլիայի կազմավորման հակման մեջ, այն

կարող է հակասության մեջ մտնել ընդհանուր շահի հետ: Որքան մեծ իշխանություն ունեն առանձին անձիք, այնքան մեծ է վտանգը, որ կառաջանա կոնֆլիկտ անհատական և ընդհանուր շահերի միջև: Տնտեսական տեսանկյունից առաջանում է երկկողմանի մոնոպոլիաների փոխադարձ թշնամանք / անտագոնիզմ /, որում հասանելի է միայն ոչ կայուն հավասարակշռության վիճակը, որը անհավասարակշռության միտում ունի: Դետագայում այդպիսի վիճակը անխուսափելիորեն հանգեցնում է խմբերի միջև ընթացող պայքարի և համընդհանուր խմբային անարխիայի:

Իրական սահմանադրությունը կարող է էապես շեղված լինել գրված սահմանադրությունից: Ընդհանուր լուծումները, որոնք իրենց արտացոլումն են գտել սահմանադրությունում, հաջողություն չունեն: Իսկ սահմանադրությանը համապատասխան ստեղծված իշխանության կառուցվածքները, օրինակ պառլամենտը, նահանջում են հոգուտ իշխող ուժերի, որոնք կանգնած են սահմանադրությունից դուրս և հետապնդում են իրենց անհատական և խմբային շահը: Տնտեսության կողմից ստեղծված իրավունքը դուրս է մղում պետության կողմից սահմանված իրավունքը և այդ կերպ վիժեցնում պետության հեղինակությունը: Սկսվում է ստեղծվել նեոֆեոդալական իրավիճակ, երբ իշխանությամբ օժտված տնտեսական խմբերը պետական իշխանության հետ սկսում են վարվել ինչպես մասնավոր գույքի տարատեսակի հետ:

Տնտեսական, հասարակական և պետական կարգերը փոխկապված են: Ինչպես տնտեսական քաղաքականությունն է գործող պետության կարիք զգում, այնպես էլ տնտեսական կարգի որոշակի քաղաքականությունն է անհրաժեշտ դառնում պետությունը գործող դարձնելու համար: Պետական և տնտեսական կարգերի փոխկապվածությունը ստիպում է միանգամից կառուցել երկու կարգերը: Դա կարևոր պահ է: Երկու կարգերը հանդիսանում են միայն ընդհանուր կարգի մասերը: Առանց մրցակցային կարգի չի կարող առաջանալ պետություն, որն ընդունակ է իրականացնել անկախ գործունեություն, իսկ առանց դրա հնարավոր չէ նաև մրցակցային կարգը:

Այսպիսով ամփոփելով հարկ է արձանագրել. Կարգերի քաղաքականության կարևորագույն խնդիրներից է անհատական և ընդհանուր շահերի կոորդինացումը: Օգնել մարդու տարրերային ուժերի ծաղկմանը և միաժամանակ հոգ տանել, որ դրանք չուղղվեն ընդհանուր շահի դեմ, դա այն նպատակն է, որին կողմնորոշված է մրցակցային կարգի քաղաքականությունը: Մրցակցային կարգը կարգի այն միակ տեսակն է, որը զսպում է եզոիզմի ուժերին: Կենտրոնացված կառավարվող տնտեսությանը բնորոշ կարգում բուռն զարգանում է ղեկավարող շերտի և բյուրոկրատիայի եզոիզմը և կամայականությունը: Չկարգավորվող տնտեսության իշխող խմբավորումներում նույն պատկերն է: Սակայն մրցակցային կարգը ստիպում է նաև զուտ եզոիստին աշխատել ընդհանուր շահի համար, ռացիոնալ կերպով ծառայել սպառողական ապրանքների սահմանափակության հաղթահարմանը:

Խնդրի լուծումը սակայն միայն Զայաստանի քաղաքացիներին թողնելը չի կարող հիմնավորված համարել: Ահա թե ինչու կարևոր է նաև համայան հայության ներուժի

ուղղորդումը դրանք հաղթահարելու ուղղությամբ՝ մասնակցելով կարգերի հաստատման քաղաքականության ներդրմանը: Գաղտնիք չէ, որ Հայաստանում տնտեսական իշխանություն ունեցող խմբերը ուժեղ են հատկապես ներմուծումների ոլորտում: Ներմուծումը փաստացի վերահսկվում է մի քանի այդպիսի խմբի կողմից: Հայտնի է նաև, որ ներմուծումը մոտ երեք անգամ գերազանցում է արտահանումը: Կարծում եմ, որ արտահանման կողմնորոշում ունեցող ոլորտներում օտարերկրյա ներդրումների աճը, և ըստ այդմ արտահանում- ներմուծում հարաբերակցության փոփոխությունն ի օգուտ արտահանման, կարող է խախտել ներկայիս ստեղծված մենաշնորհային հավասարակշռությունը և նախադրյալներ ստեղծել արդյունավետ մրցակցային քաղաքականություն իրականացնելու համար: Կարծում եմ, որ սփյուռքի մեր հայրենակիցները հայրենիքում իրենց կապիտալն ուղղելով արտահանման կողմնորոշում ունեցող ոլորտներ, կարող են այդ հարցում ունենալ որոշիչ ազդեցություն: Սա վերաբերում է նաև տեղական արտադրության ճյուղերում մրցակցության խթանման քաղաքականությանը: Մեկ այլ կարևոր ազդեցություն կարող է լինել Հայաստանում կատարված ներդրումներով կազմակերպություններում ձեռնարկատիրական արևմտյան լավագույն փորձի և մշակույթի ներդրումը, ինչը ենթադրում է կորպորատիվ կառավարման զարգացած համակարգի, գործատու վարձու աշխատող հարաբերությունների որակապես նոր հարաբերությունների և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ժամանակակից ստանդարտների ձևավորումը: